Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը։

Հաստատություն՝ Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 7 մանկապարտեզ

Դասիարակ՝ Ղազարյան Անահիտ

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ---------- 3

ԳԼՈՒԽ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԳԻՏԱՄԵԹՈԴԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1.1..ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄՆ ԱՌԱՆՁՆՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ---------- 4

1.2ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ---------- 6

2,1ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԻ ԵՎ ԿՐԹԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ---------- 8

2.2. ՆԱԽԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ---------- 17

2.3 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ---------- 19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ---------- 20

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ---------- 22

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է նախադրոցական մանկավարժի ինքնակրթության և ինքնակատարելագործման անհրաժեշտությանբ:

Մեր ուսումնասիրության նպատակն է բացահայտել մանկավարժի մասնագիտական չափանիշների զարգացման ոլորտները, մասնագիտական կոմպետենցիաների շարունակական կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների միջոցով:

Ուսումնասիրության խնդիրները .

• ուսումնասիրել մեր թեմայի հիմնախնդրին վերաբերող մասնագիտական գրականություն,

• դիտարկել չափորոշչային ծրագրերը,առարկայական ծրագիրը, գործող մեթոդական ձեռնարկները և դրանք վերլուծել մեր ուսումնասիրության թեմայի տեսանկյունից,

• իրականացնել տարբեր թեմատիկ պարապմունքների դիտարկումներ, և դրանք քննարկել մեր ուսումնասիրության թեմայի տեսանկյունից,

• բացահայտել նախադպրոցական հաստատությունում նորարարական մեթոդների կիրառումը:

ԳԼՈՒԽ 1 ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԿՈՄՊԵՏԵՆՑԻԱՆԵՐԻ ԳԻՏԱՄԵԹՈԴԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

1. 1 Մանկավարժական աշխատողի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման առանձնահատկությունները մասնագիտական գործունեության ձևերի միջոցով:

Կրթական գործընթացում շատ կարևոր է որակյալ ստեղծագործական մտածողություն ունեցող, կոմպենենտ և նախաձեռնող մանկավարժի դերը, ով կարող է արդի աշխարհում ձևավորել համակողմանի զարգացած անձնավորություն: Հետևաբար մանկավարժի մասնագիտական կոմպետենտության զարգացումը դարձել է անհրաժեշտություն:

Կոմպետենտ է համարվում այն մանկավարժը, ով գերազանց տիրապետում է իր մասնագիտությանը և արդյունավետ իրականացնում է իր աշխատանքային գործունեությունը, ինքնուրույն կառուցում է աշխատանքային սցենարը, մասնագիտական փորձը հարստացնում է իր ստեղծագործական ներդրումներով և նպաստում է հասարակության մեջ տվյալ մասնագիտության հեղինակության բարձրացմանը:

«Կոմպետենտություն» հասկացությունը ի հայտ է եկել 1960-ական թվականների վերջում եվրոպական երկրներում, իսկ 1980-ականների վերջերին Ռուսաստանի Դաշնությունում: Ապա ձևավորվել է ընդհանուր և մասնագիտական կրթության կոմպետենտային մոտեցումը, որը ենթադրում է կոմպետենտային մոտեցման հնարավորությունը մանկավարժական գործունեությանը:

Այսպիսով, կոմպետենտ մարդն օժտված է որոշակի գիտելիքներով, ընդունակություններով, ինչն իրեն հնարավորություն է տալիս յուրահատուկ դարձնել իր գաղափարները և արդյունավետորեն գործել:

Մանկավարժական կոմպետենտություն ասելով՝ հասկանում ենք մասնագիտական գործունեության ընթացքում մանկավարժի տեսական և պրակտիկ գիտելիքների համակցումը: Ըստ Լ. Յու. Կիվցովի՝ «Մասնագիտական կոմպետենտությունը մասնագետի ինտեգրված հատկանիշ է ունեցած գիտելիքների, հնարավորությունների, կարողությունների մակարդակի հիման վրա, ինչն ուղենիշ է հանդիսանում դեպի մասնագիտական արհեստավարժություն»: Մանկավարժի արհեստավարժությունը դիտարկվում է որպես առարկայական, մեթոդական,

հոգեբանամանկավարժական գիտելիքների, կարողությունների, անձնային որակների ամբողջություն և մասնագիտական զարգացման արդյունք: «Մասնագիտական զարգացումը դիտվում է որպես մասնագիտական արհեստավարժության տանող հիմնական ուղի»: Ուսուցչի անձի զարգացումն ու արհեստավարժությունը փոխկապակցված են և փոխլրացնում են միմյանց:

Մանկավարժական աշխատողի մասնագիտական կոմպետենտությունը բաղկացած է հետևյալ կոմպետենցիաներից

• Ելակետային կոմպետենցիաներ, որոնք հատուկ են ունիվերսալ մանկավարժների և ապահովում են նպատակային, արդյունավետ մանկավարժական գործունեություն:

• Առարկայական կոմպետենցիաներ, որոնք բնորոշում են կոնկրետ մանկավարժին և ապահովում են կոնկրետ ուսումնական առարկայի արդյունավետ դասավանդումը:

• Մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք հատուկ են նեղ մասնագիտությամբ մանկավարժներին և ապահովում են ծագող մանկավարժական խնդիրների լուծումը:

Մանկավարժի մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը կարևոր է: Այժմ կրթությունն իրականացնող սուբյեկտը՝ մանկավարժն իր իմիջով խիստ տարբեր է նախորդ դարերի ուսուցիչներից: Դպրոցի գերխնդիրն է կոմպետենտ մանակավարժ ունենալը, ով արագ հարմարվում է փոփոխություններին, կրեատիվ է, կողմնորոշվող, անընդհատ թարմացնում և ավելացնում է իր մասնագիտական գիտելիքները և պետության կողմից իրականացվող վերապատրաստումներն ուղղված են խնդրի լուծմանը:

Մասնագիտական ինքնակատարելագործումը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական գործունեության կարողություններն ու հմտությունները: Վերջիններս ուսուցչին արդյունավետորեն գործելու հնարավորություն են տալիս:

1.2 Ուսուցչի մասնագիտական չափանիշների զարգացման ոլորտները

Ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանվում են՝

1. Առարկայի խորը իմացությամբ

2. Դասավանդման պրակտիկ կարողություններով

3. Սովորողին ցուցաբերվող աջակցությամբ

4. Ինքնազարգացմամբ

«Ուսուցման մեթոդ» հասկացությունն իր մեջ ներառում է երեք խնդիր՝ ի"նչ սովորեցնել (կրթության բովանդակություն), ինչու՞ սովորեցնել (կրթության նպատակներ) և ինչպե՞ս սովորեցնել (ուսուցման մեթոդիկա):

Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ: Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա.

• ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը,

• ոսուցման նյութի քանակը և բարդությունը,

• սովորողների պատրաստվածության մակարդակը,

• ուսուցման կազմակերպման պայմանները,

• սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,

3. Ըստ մասնագիտական գործունեության ձևերի մանկավարժից ակնկալվող ստեղծարար մոտեցում, ուսումնական գործընթացի ներառականության և մասնակցայնության ապահովում, մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում

Ըստ Էնթոնի Ջ. Նիտկոյի՝ ուսումնական նյութերի կիրառումը դասարանային գործունեության ընթացքում՝ պետք է տրվի պարզորոշ բացատրություններով, բազմաթիվ գործնական օրինակներով, պատկերազարդումներով և քայլ առ քայլ նկարագրված մեթոդներով: Դասվանդումն ու գնահատումը պետք է լինեն միահյուսված: Խիստ կարևոր է, որ ուսումնական գործընթացում ուսումնասիրվող թեմաները մեկնաբանվեն սովորողների համար: Այսպիսով կբացահայտվեն գնահատման յուրաքանչյուր եղանակի ուժեղ և թույլ կողմերը: Հետևաբար մանկավարժը պետք է լինի որակյալ մասնագետ, որի աշխատանքային փորձն ու

դատողություններն անհրաժեշտ են սովորողների առաջադիմության պատշաճ գնահատման համար։

Համընդհանուր ներառական կրթությունը հանդիսանում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք։ Ներառական կրթության քաղաքականությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովմանը։ Այստեղ ևս կարևորվում է, որ ուսուցիչը կարողանա հասցեական կրթական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուր երեխայի՝ ըստ կատարված կարիքի գնահատման ։Հետևաբար այստեղ ևս կա մասնագիտական զարգացման կարիք և պատասխանատվության ստանձնում, որի արդյունքում մանկավարժը կունենա իր ուժերի հանդեպ վստահություն, վերլուծաքննադատական մտածողություն։ Դե իսկ հանդուրժողականությունը և սաների կառավարման հմտությունը պետք է լինեն յուրաքանչյուր դաստիարակի կարևորագույն հատկանիշները՝ ողջ մանկավարժական գործունեության ընթացքում։

Մանկավարժը պետք է լինի հետազոտող և ստեղծարար։

Ամբողջ աշխարհում շարունակաբար տեղի են ունենում կրթական և տեխնոլոգիական փոփոխություններ և աշխարհը անընդհատ ձգտում է զարգացման, հետևաբար մանկավարժները կարիք ունեն զարգանալու և նոր հմտությունները պրակտիկայում կիրառելու։

ԳԼՈՒԽ 2

2.1 Նախակրթական կրթության պետական չափորոշչի և կրթական ծրագրի ուսումնասիրություն

Նախադպրոցական կրթության բովանդակությունը պայմանավորված է նախադպրոցական տարիքային բոլոր փուլերի զարգացման անհատական առանձնահատկություններով:

16.Նախադպրոցական կրթության բովանդակությունը կազմում են նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական ընդհանուր նպատակներին համապատասխան ընտրված՝ ընկալման, ըմբռնման ու յուրացման համար նախատեսված գիտելիքները, կարողությունները, հմտությունները և տարրական բարոյական արժեքային հարաբերությունները:

17.Նախադպրոցական տարիքի երեխաների կրթության բովանդակությունը հիմնականում ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1) շարժողական ոլորտ.

2) խոսքի և հաղորդակցական ոլորտ.

3) հուզական, սոցիալ-անձնային ոլորտ.

4) իմացական ոլորտ.

5) ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ:

18.Կրթության բովանդակության՝ չափորոշչով սահմանված հասանելի մակարդակը ապահովվում է կրթության բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ երեխաների զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան կազմված, կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից հաստատված Նախադպրոցական կրթական ծրագրի համաձայն:

19.Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված նախադպրոցական կրթական ծրագրերի կատարումը ուսումնական հաստատությունների կողմից պարտադիր է:

20.Նախադպրոցական կրթական ծրագիրը հիմք է նախադպրոցական ուսումնական հաստատությունների կրթական գործունեության համապատասխանության օբյեկտիվ գնահատականի համար:

21.Նախադպրոցական կրթական (հիմնական) ծրագիրը նախադպրոցական կրթության նպատակների իրականացմանն ուղղված, տարիքային առանձնահատկություններին համապատասխան՝ ուսումնադաստիարակչական գործընթացի բովանդակության, կրթության կազմակերպման ձևերի, կիրառվող մեթոդաբանության, տեխնոլոգիաների ամբողջություն է, որն ապահովում է նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված վերջնարդյունքները:

22.Նախադպրոցական կրթական ծրագրով սահմանված մակարդակն ապահովվում է կրթության բովանդակային բաղադրիչների միջոցով, որոնք իրականացվում են ըստ տարիքային խմբերի և յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների ու կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի, երեխաների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմամբ՝ այդ տարիքի երեխաների առանձնահատկություններին, զարգացման ոլորտներին և ուղղություններին համապատասխան:

23.Նախադպրոցական կրթական ծրագիրը սահմանում է յուրաքանչյուր տարիքային խմբի կրթության բովանդակության ընդհանրական կառուցվածքը, կանոնակարգային պահերը, ուսումնական տարվա սկիզբը, ավարտը, հիմնական ուղղություններին հատկացվող շաբաթական և տարեկան պարապմունքների քանակը, սաների շաբաթական բեռնվածության առավելագույն քանակը, ակնկալվող արդյունքներն ըստ զարգացման ոլորտների, գործունեության ձևերի:

24.Նախադպրոցական կրթական ծրագրերի բովանդակությունը ներկայացվում է զարգացման հետևյալ հիմնական բնագավառներով (ուղղություններով)՝

1) խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, գրաճանաչության, ընդհանուր ճանաչողական զարգացում.

2) հուզակամային և սոցիալ-անձնային զարգացում.

3) շարժողական և ֆիզիկական զարգացում.

4) աշխարհաճանաչման ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունների և հնարամտության զարգացում.

5) բարոյական, ազգային, էկոլոգիական, իրավական և սեռային գիտակցության և մտածելակերպի զարգացում՝ արժեքային հիմունքների փոխանցմամբ:

25.Նախադպրոցական կրթական ծրագրի հիման վրա մշակվում և հաստատվում են նախադպրոցական կրթության իրականացման, այդ թվում՝ այլընտրանքային օրինակելի կրթական ծրագրեր և պլաններ՝ ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ ձեռնարկներ:

26.Նախադպրոցական կրթական ծրագրերին ներկայացվում են հետևյալ պահանջները՝

1) համապատասխանությունը նախադպրոցական կրթության չափորոշչին.

2) կրթության աշխարհիկ բնույթը.

3) երեխաների և մեծահասակների փոխգործունեության անհատակողմնորոշված (երեխայակենտրոն) մոտեցման ապահովումը.

4) ազգային ավանդույթների և համամարդկային արժեքների զուգորդումը.

5)նախադպրոցական կրթության բովանդակության մեջ երեխայի խոսքի, տրամաբանության, ֆիզիկական, մտավոր, գեղարվեստական զարգացման, իրավունքներին և պարտականություններին, բնագիտության հիմունքներին ծանոթացման ներառումը:

27. Կրթական ծրագրերը պետք է նպատակաուղղված լինեն՝

1) հետաքրքրասիրության զարգացմանը՝ որպես նախադպրոցականի ճանաչողական (իմացական) ակտիվության գործոնի.

2) երեխայի ընդունակությունների զարգացմանը.

3) ստեղծագործական երևակայության զարգացմանը.

4) հաղորդակցական հմտությունների ձևավորմանը:

28. Կրթական ծրագրերը պետք է ապահովեն՝

1)երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացումը, յուրաքանչյուր երեխայի հուզական բարվոքությունը.

2) երեխայի անձի, նրա ստեղծագործական ունակությունների զարգացման համար միջավայրի և պայմանների ստեղծումը.

3)համամարդկային արժեքներին, օրինականության գաղափարին հաղորդակցումը, շփումը.

4)ընտանիքի հետ համագործակցությունը՝ երեխայի լիարժեք զարգացման գործում:

29.Կրթական ծրագրերը պետք է նախատեսեն երեխայի կյանքի կազմակերպման 3 ձև՝

1) պարապմունքներ՝ որպես ուսուցման կազմակերպման հատուկ ձև.

2) խաղային գործունեության տեսակներ.

3) օրվա ընթացքում երեխայի ազատ ժամանակի տնօրինում:

30.Կրթական ծրագրերը պետք է ներառեն երեխաների անհատական և համատեղ գործունեության օպտիմալ համադրումը, նրանց տարիքին առանձնահատուկ գործունեության տեսակների հաշվառմամբ:

31.Երեխաների ուսումնական, խաղային բեռնվածության առավելագույն չափը և հարաբերակցությունը փոխկապակցված են կրթության բովանդակության, երեխայի տարիքային առանձնահատկությունների և անհատական հնարավորությունների, ուսուցման ձևերի և մեթոդների, հաստատության աշխատանքային ռեժիմի հետ:

32.Ուսումնական և խաղային բեռնվածության հարաբերակցությունում գերակշռում է խաղայինը. ռեժիմային բոլոր պահերն ուղեկցվում են տարբեր խաղերով և խաղային մեթոդներով:

33.Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման ընթացքի գնահատումն իրականացվում է մանկավարժների կողմից շարունակական դիտարկման, փաստագրման և անհատական թղթապանակների վարման միջոցով:

34.Նախադպրոցական ուսումնական հաստատությունում մինչև 1 տարեկան երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներն են (զարգացնող միջավայր, անվտանգության ապահովում, առողջության պահպանում)՝

1)խմբասենյակի տարածքում (այսուհետ՝ տարածք) առկա են մանեժներ կամ այլ սարքավորումներ, որոնք ապահովում են երեխաների անվտանգությունը.

2)տարածքում առկա է փափուկ հատակ՝ չորեքթաթ շարժվող երեխաների համար.

3)տարածքում առկա են սարքավորումներ, միջոցներ՝ երեխաների նստակյաց խաղերի համար.

4)տարածքում առկա են սարքավորումներ, միջոցներ՝ երեխաների հենաշարժողական ակտիվության համար՝ ճոճանակ, ճոճաթոռ, շարժաթոռ.

5) տարածքում առկա են գունեղ նկարներ, խաղալիքներ՝ ինքնուրույն և մեծերի հետ գործունեության ընթացքում կիրառելու համար.

6) տարածքում առկա են երեխաների ձեռքի շարժումներն ու գործողությունները խթանող խաղալիքներ և պարագաներ.

7)խմբում առկա են սյուժետային խաղալիքներ (մանկական կահույք, սպասք, տիկնիկներ, մեքենաներ, կենդանիներ և այլն).

8)առկա են մանկական երաժշտական գործիքներ, ձայնային հնչեղությամբ խաղալիքներ.

9) առկա են նկարազարդ, կտորից գրքեր, գունավոր մատիտներ.

10)առկա են նվագարկիչ, ձայնարկիչ, այլ տեխնիկական միջոցներ:

35.Նախադպրոցական ուսումնական հաստատությունում 1-ից մինչև 3 տարեկան երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներն են՝

1)խմբասենյակում առկա են խաղային պարագաներ երեխաների ճանաչողական զարգացման համար՝ խճանկար, «մատրյոշկա» տիկնիկներ, բուրգ, երկրաչափական տարբեր անցքերով աղյուսիկներ, բազմագույն խորանարդիկներ, գնդակներ, փոքրիկ մեքենաներ, գրքեր գունեղ նկարներով.

2)առկա են երեխաների սյուժետային խաղերի համար նյութեր. տիկնիկներ, տարբեր չափերի կենդանիներ, տիկնիկների հագուստ, խաղալիք կահույք, տարբեր ձևերի և գույների կառուցողական նյութեր, խաղալիք-հեռախոսներ, խորանարդիկներ, փայտիկներ և այլն.

3)առկա են խաղային նյութեր և սարքավորումներ՝ երեխաների երաժշտական ունակությունների զարգացման համար.

4)առկա են նյութեր և սարքավորումներ՝ երեխաների ստեղծագործական գործունեության համար. ալբոմներ, թղթեր, վրձիններ, մատիտներ, ֆլոմաստերներ, պլաստիլին և այլն.

5)բոլոր նյութերը հասու և մատչելի են երեխաներին՝ աշխատելու համար. մատիտները սրված են, ֆլոմաստերները՝ թարմ, վրձինները՝ մաքուր.

6) առկա են խաղալիքներ՝ զբոսանքների ժամանակ խաղալու համար. փոքրիկ դույլեր, կաղապարներ, բահեր և այլն.

7) առկա են խաղեր և սարքավորումներ՝ քայլքի և այլ շարժումների համար.

8) տարածքում առկա է երեխաների համատեղ խաղերի համար առանձնացված հատված.

9) բոլոր խաղալիքները, նյութերը երեխաների համար հասանելի են.

10) տարածքը զարդարված է գունեղ նկարներով, ծաղիկներով, բույսերով.

11) խմբասենյակում առկա են դիդակտիկ նյութեր՝ երեխաների զգայարանների, մանր մկանների համակարգի և սյուժետային խաղերի զարգացման համար.

12) խմբասենյակում և դրանից դուրս ստեղծված են պայմաններ շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար. հարմարեցված աթոռ սեղանով, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք (սպասքի ադապտացիաներ), հարմարեցված գրենական պիտույքներ:

36. Նախադպրոցական ուսումնական հաստատությունում 3-ից մինչև 6 տարեկան երեխաների զարգացնող միջավայրին ներկայացվող պահանջներն են՝

1) հաստատությունում առկա են՝ սարքավորումներ և դիդակտիկ միջոցներ երեխաների համակողմանի զարգացման համար.

2) տեսալսողական միջոցներ.

3) ալբոմներ, գեղարվեստական գրականություն և այլ նյութեր երեխաների տպավորությունները հարստացնելու համար.

4) ստեղծված են պայմաններ մարդու, պատմության, մշակույթի մասին երեխաների պատկերացումների զարգացման համար. խմբասենյակում առկա են՝

դիդակտիկ խաղեր (լոտո, դոմինո, նկարների հավաքածուներ), տարբեր սյուժետային խաղային հավաքածուներ, լեգոներ և խաղալիքներ՝ տարաբնույթ գործունեության ժամանակ երեխաների զարգացման համար.

5) խաղեր երեխաների ինտելեկտուալ զարգացման համար (դոմինո, շաշկի, շախմատ և այլն).

6) խաղալիքներ և սարքավորումներ սենսորային զարգացման համար.

7) դիտողական, նկարազարդ նյութեր.

8) պայմաններ երեխաների անհատական և համատեղ ակտիվության դրսևորման համար.

9) պայմաններ երեխաների առողջության պահպանման և ամրապնդման համար.

10) բժշկական սարքավորումներ երեխաների բուժկանխարգելիչ միջոցառումների համար.

11) հատուկ տարածքներ երեխաների հետ տարվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման համար.

12) ստեղծված են խելամիտ ֆիզիկական հարմարեցումներ երեխաների զարգացման առանձնահատկություններին համապատասխան.

13) ստեղծված են պայմաններ երեխաների գեղարվեստագեղագիտական զարգացման համար.

14) տարածքի գեղագիտական ձևավորումներ՝ ուղղված երեխաների գեղարվեստական զարգացմանը (նկարներ, վերատպություններ, ժողովրդական ստեղծագործության նմուշներ, երեխաների, մեծերի աշխատանքների ցուցահանդեսներ և այլն).

15) ստեղծված են պայմաններ երեխաների թատերական գործունեության զարգացման համար.

16) կան օժանդակ հարմարություններ թատերական գործունեության կազմակերպման համար.

17) առկա են թատրոնների տարաբնույթ տեսակներ (ստվերային, ստվարաթղթային, սեղանային և այլն).

18) առկա են թատերական բեմականացումների համար ատրիբուտներ.

19) ստեղծված են պայմաններ երեխաների երաժշտական գործունեության համար.

20) առկա է երաժշտական դահլիճ.

21) առկա են երաժշտական գործիքներ, նվագարաններ և երաժշտադիդակտիկ խաղեր՝ տեղադրված համապատասխան զարգացման կենտրոնում.

22) հաստատությունում ստեղծված են պայմաններ երեխաների կառուցողական գործունեության զարգացման համար.

23) խմբասենյակներում առկա են մանր (սեղանային) և խոշոր (հատակի) կառուցողական նյութեր, տարբեր տիպի կոնստրուկտորներ, մոզաիկաներ,

կտրվածքներով նկարներ, բնական նյութեր՝ տեղադրված համապատասխան զարգացման կենտրոնում.

24) հաստատությունում ստեղծված են պայմաններ երեխաների էկոլոգիական կրթության համար. առկա են դիտողական պարագաներ, բնական նյութեր, բնության երևույթները նկարագրող պաստառներ.

25) հաստատությունում առկա են կանաչապատման անկյուններ (սենյակային բույսեր), ստեղծված են պայմաններ բույսերի խնամքի և աճեցման համար (այգի, բանջարանոց, ծաղկանոց և այլն).

26) առկա է առանձին տարածք կենդանի բնության համար (ձմեռային այգի, կենդանական անկյուն և այլն).

27) հաստատությունում առկա են ազգային պատմությունն ու մշակույթը նկարագրող պաստառներ.

28) հաստատությունում առկա է պետական խորհրդանիշների անկյուն (դրոշ, զինանշան, օրհներգ).

29) առկա են ազգային, ժողովրդական կենցաղի առարկաների նմուշներ, ազգային տարազներով տիկնիկներ.

30) առկա է մանկական գեղարվեստական գրականություն.

31) խմբասենյակում առկա են երթևեկության կանոններին ծանոթացնող դիդակտիկ խաղեր և խաղալիքներ, բակում ստեղծված են պայմաններ երթևեկության կանոնները կիրառելու համար.

32) հաստատությունում ստեղծված են պայմաններ երեխաների ֆիզիկական զարգացման համար. առկա է մարզադահլիճ, դեկորատիվ կամ իսկական լողավազան, ֆիզիկական ակտիվության համար անհրաժեշտ սարքավորումներ, մարզական գույք.

33) խմբասենյակում առկա են նյութեր և սարքավորումներ երեխաների մոտ թվի, մեծության, տարածական և ժամանակային պատկերացումների ձևավորման համար (թվանշաններ, կշեռքներ, չափման միավորներ գրատախտակ, օրացույց, ժամացույց. ավազի, արևային ժամացույց և այլն)՝ տեղադրված համապատասխան զարգացման կենտրոնում.

34) համակարգչի առկայություն՝ մեդիագրագիտության և մեդիաանվտանգության կանոններին տիրապետելու համար անհրաժեշտ հավելվածներով.

35) առկա են նյութեր և սարքավորումներ երեխաների փորձարարական աշխատանքների ցուցադրման համար (գլոբուս, քարտեզ, մակետներ, նկարների հավաքածուներ, մագնիս, սեղանային տպագիր խաղեր և այլն).

36) հաստատությունում ստեղծված են պայմաններ երեխաների խոսքի զարգացման համար.

37) առկա է մանկական գրադարան.

38) առկա են առանձին տարածքներ օտար լեզուների ուսուցման համար.

39) առկա է ծրագրամեթոդական գրականության անկյուն աշխատողների և ծնողների համար.

40) առկա են նկարների հավաքածուներ և սեղանային տպագիր խաղեր՝ խոսքի զարգացմանն ուղղված.

41) առկա է առանձին տարածք խաղերի համար.

42) բակում, հողամասում առկա են խաղային սարքավորումներ.

43) հաստատությունում առկա են խաղեր և խաղալիքներ տարբեր տեսակի խաղերի համար. սյուժետադերային, շարժուն, մարզական, դիդակտիկ և այլն.

44) խմբասենյակում առկա են նյութեր, որոնք կարող են հիմք ծառայել՝ որպես փոխարինող առարկաներ օգտագործելու համար.

45) խմբասենյակում և դրանից դուրս ստեղծված են պայմաններ շարժունակության խանգարումներ ունեցող երեխաների համար. հարմարեցված աթոռ սեղանով, կանգնակ, սայլակ, քայլակ, տարբեր չափսերի բարձեր, աթոռակներ նստելու ճիշտ դիրք ապահովելու համար, հարմարեցված սպասք (սպասքի ադապտացիաներ), հարմարեցված գրենական պիտույքներ.

46) նախադպրոցական ուսումնական հաստատություններում կիրառվող սարքերը, սարքավորումները, խաղալիքներն ու նյութերը պետք է համապատասխանեն տարիքին:

2. 2. ՆԱԽԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Ուսումնասիրելով վերոհիշյալ գրականությանությունը ,պարապմունքի ժամանակ դասի նպատակից ելնելով իրականացրել ենք Ֆիզդադարներ՝ թեմային առնչվող, որոնք ստեղծագործել ենք ինքներս։Ֆիզդադարը նպաստել է տրված թեմայի խորացմանը և ամրապնդմանը։

Նմանատիպ ֆիզդադարներ ստեղծագործական մոտեցմամաբ հաճախ ենք իրականացնում,քանի որ այն ինչ մատուցում ենք խաղի միջոցով ավելի լավ է յուրացվում սաների կողմից։

Մթոդական ձեռնարկների ուսումնասիրություն և պրակտիկ օգտագործում

Դաստիարակի ինքնակատարելագործմանը միտված լավագույն ձեռնարկներից են Հ.Միտոյանի«Ուսումնական ձեռնարկը »,որտեղ հանգամանորեն ներկայացված է նաև տարատարիք խմբերում պարապմունքների անցկացման մեթոդիկան։

Երեխաների իրավունքների և ազատությունների ուսումնասիրության նպատակով դաստիարակին գործուն օգնություն է մատուցում ՄԱԿ-ի համապատասխան կոնվեցիայի ,ՀՀ օրենսգրքի համապատասխան բաժինների ուսումնասիրությունը։Այս առումով՝գործուն օգնություն եղավ ինձ համար իրազեկման շաբաթը՝ «Երեխաների իրավունքներն իրենց աչքերով » խորագրով։Այս թեմայի շրջանակում դիտեցինք համապատասխան տեսասահիկներ,իսկ հետո երեխաների հետ անցկացրեցինք ուսուցողական հագեցած միջոցառում վերոհիշյալ թեմայով։Երեխաների բեմականացված գեղեցիկ,տպավորիչ ցուցադրությամբ։Երխաները ընկալեցին իրենց հիմնարար իրավունքները՝ տարիքին հասանելի մոտեցմամբ ,ծանոթացան ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին։Ծանոթացան նաև՝ՀՀ օրենսդրությամբ ամրագրված երեխաների իրավունքներին և ազատություններին,ինչպես նաև ընկալեցին իրենց պարտականությունների շրջանակները։

«Անվտանգ վարքագծի» մատուցման գործընթացում շատ կարևոր օգնություն էր նաև՝ «Անվտանգ վարքագիծ » ուսումնական ձեռնարկի ուսումնասիրությունը,ինչպես նաև հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից տրամադրած «Արկած որոնողները» մանկական պատկերազարդ ձեռնարկը։

Գործնական գիտելիքների համալրման առումով,շատ հետաքրքիր ձեռնարկ էր նաև Գայանե Մարտիրոսյանի «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում» մեթոդական ուղեցույցը, Ասյա Հովհաննիսյանի «Դպրոցի շեմին» ձեռնարկը, Լ.Մանուկյանի՝ «Երթևեկության կանոններ»հրահանգչամեթոդական ցուցումների ձեռնարկը նախադպրոցականների համար։

Գործուն օգնություն է մեր պրակտիկայում նաև Հ.Ս.Հարությունյանի «Խաղալով սովորենք մաթեմատիկա »ուսումնական ձեռնարկը։

Մեր պրակտիկ գործունեության համար շատ արդյունավետ ձեռնարկ է Ասյա Հովհհանիսյանի կողմից կազմված «Պարտեզ » նախադպրոցական կրթական ծրագիրը։

Մայրենիի ուսուցման գործում մեծ օգնությ»ուն է դաստիարակին Ս.Չիբուխչյանի, Լ.Սարգսյանի «Մայրենի լեզվի պարապմունքները» մանկապարտեզի ավագ խմբում ուսումնամեթոդական ձեռնարկը, ինչպես նաև խոսքի զարգացման պարապմունքներին՝ Ա.Հովհհանիսյանի և Լ.Ղուլումչյանի կողմից կացմված «Բարև փոքրիկ» մանկական ստեղծագործության ընտրանին։

Առաջարկություններ

1.Առաջարկում եմ նախադպրոցական մանկավարժի համար ստեղծել ազատ ստեղծագործական մոտեցումներ իրականացնելու հնարավորություններ։

2.Առաջարկում եմ յուրաքանչյուր նորարարություն,մեթոդ,առաջարկ մշակելու գործընթացում ակտիվ միջամտություն ունենան պրակտիկ ,երկարամյա վաստակ ունեցող մանկավարժները։

3.Առաջարկում եմ հաճախակի դարձնել մանկավարժների կենդանի շփումները կլոր սեղանների շուրջ։

4.Առաջարկում եմ իրականացնել մանկավարժական հետաքրքիր մրցույթներ։

5.Առաջարկում եմ ներառական կրթության պարագայում,հետամուտ լինել խմբերում հատուկ մանկավարժների և հոգեբանների մշտական գործուն մասնակցության ապահովմանը։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության միջոցով բացահայտվեց, թե որքան կարևոր է մանկավարժ մասնագիտական կոմպետենցիաների շարունակական կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների միջոցով: Նաև պարզ դարձավ, որ ուսուցչի կողմից պրակտիկայում կիրառվող բազմաթիվ մեթոդներն ու ՏՀՏ տեխնոլոգիաները հանրակրթության ոլորտում դարձել են անհրաժեշտություն: Չկան մեթոդներ ու տեխնոլոգիաներ՝ չկա արդյունավետ ուսուցում:

Մանկավարժի մասնագիտական կոմպետենցիաների զարգացումը օրապահանջ է: Ուսուցչի արհեստավարժության զարգացումն անհնար է դիտարկել առանց ուսուցչի ինքնակատարելագործման:Մանկավարժի մասնագիտական կոմպետենտության զարգացման համար անհրաժեշտ է ձեւավորել ինքնակատարելագործման մոտիվացիա հանուն նոր գիտելիքների եւ մասնագիտական հմտությունների ձեռքբերման:

Մասնագիտական ինքնակատարելագործումը հնարավորություն է տալիս զարգացնելու մասնագիտական գործունեության կարողություններն ու հմտությունները:

Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության բաղադրիչները, ինչպիսիք են մանկավարժական մշակույթը, աշխատանքի նկատմամբ ստեղծագործական վերաբերմունքը, մասնագիտական որակները, գիտելիքները, կարողությունները եւ հմտությունները անընդհատ թարմացման եւ վերանայման կարիք են զգում:

Մանկավարժական մասնագիտական կոմպետենցիաների շարքում ոչ միայն կարեւորում են մասնագիտական գիտելիքները, այլ կարողություններն ու հմտությունները:

●Կրթության որակի բարելավումը պահանջում է, որ մանկավարժը «ունենա մասնագիտական անհրաժեշտ պատրաստվածություն եւ բարոյական որակներ, կարեւորի սովորելու եւ սովորեցնելու ժամանակակից մեթոդները, կատարելագործի մասնագիտական կարողությունները, պարբերաբար մասնակցի վերապատրաստման դասընթացների, զբաղվի ինքնակրթությամբ:

Ուսումնասիրելով հիմնախնդիրը՝ եկանք եզրակացության, որ ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումն արդի կրթական պահանջների

արտացոլանքն է, որում մանկավարժական կոմպետենտությունը սահմանվում է որպես ուսուցչի գիտելիքների, կարողությունների, իրազեկությունների եւ մասնագիտական պատրաստվածության մակարդակ, ինչը հնարավորություն է տալիս արդյունավետորեն գործել փոփոխվող սոցիալական, մշակութային եւ մասնագիտական իրավիճակներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Տեսություններ, մեթոդներ, գնահատում. հեղ. Ս. ՎարդումյանՆ. Ջաղինյան,Լ. Հարությունյան, Գ. Վարելլա

2. «Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության Ուսուցչի մասնագիտական կոմպետենտության զարգացումը որպես հիմնախնդիր զարգացումը որպես հիմնախնդիր» Աննա Սարգսյան

3. «Նախադպրոցական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը և 23-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում։

4. https://aspu.am/website/images/files/Baxdasaryan%20Lilit.pdf

5. (DOC) Ուսուցչի մասնագիտական կոմպենտենտությունը և առանցքային կոմպենտացիանները | Լուսինե Գասպարյան - Academia.edu

6. Հ.Միտոյան, Լ.Սմբատյան, «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Էդիթ պրինտ հրատարակչություն, 2010թ.:

5. Լ. Մանուկյան, Հ. Միտոյան եւ ուրիշներ, «Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր», Երեւան, 2008թ.

6 Հ.Միտոյան,Լ.Սմբատյան,Լ.Սարգսյան,«Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում», ԿԱԻ,Երեւան, 2013թ.:

7 Լ.Մանուկյան, Լ.Սմբատյան, Հ.Միտոյան, «Մայրենի լեզվի դիդակտիկ խաղերը մանկապարտեզի ավագ խմբում», Երեւան, 2007թ.:

8. Հ.Հարությունյան, Ս.Չիբուխչյան «Մաթեմատիկայի իմ այբուբենը», I եւ II մաս, Երեւան, ՎԱ-ՀԱ, 2008թ.:

9. Ռ.Առաքելյան, «Ֆիզկուլտուրայի պարապմունքները մանկապարտեզի ավագ խմբում», «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երեւան, 2007թ.:

10 Ռ.Առաքելյան, «Շարժախաղեր 5-6 տարեկանների համար», Երեւան, 2008թ.:

11. Գ. Մարտիրոսյան «Էկոլոգիական դաստիարակությունը նախադպրոցական տարիքում», «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երեւան, 2007թ.:

12 Լ.Սմբատյան, Լ.Սարգսյան, «Կերպարվեստը մանկապարտեզի միջին խմբում», Երեւան, ԿԱԻ, 2016թ.:

13.Լ.Սմբատյան, «Ձախլիկների զարմանահրաշ աշխարհը», Էդիթ Պրինտ հրատարակչություն, 2009 թ.: